ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

Տնօրեն՝ /Ա.Գևորգյան/

«31» «օգոստոս » 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Սիսիանի համար 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

7-րդ «ա» դասարան

դասարան

Քնարիկ Սլավիկի Խաչատրյան

Դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023-2024ուստարի

Կրթականդաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

7-րդ «ա» դասարանում սովորում են 21 աշակերտներ՝ 12 աղջիկ և 9 տղա։ Դասարանում առկա է ուսման բարձր առաջադիմություն և որակ։

Հետաքրքիր, պրպտող երեխաների խումբ է հավաքված դասարանում։ Աշխատասեր աշակերտներ շատ կան։ Ունենք 7 գերազանցիկ և 6 հարվածային։ Դասարանի սանիտարական վիճակը լավ է։ Աշակերտները հաճախում են տարբեր բնույթի խմբակների, պարապմունքների։

Դասարանում առկա է բարոյահոգեբանայան առողջ մթնոլորտ։

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքներ

1.Դաստիարակել սեր ուսման և կրթության նկատմամբ։

2.Կազմակերպել աշխատանք ուսումնական պրոցեսում հետ մնացող աշակերտների հետ։

3.Կանոնավորել օրվա ռեժիմը, հետևել տնային հանձնարարությունների ժամանակին կատարմանը, երեխաներին օգնել ուսման և հանգստի խելացի կազմակերպման գործում։

4.Կիրառել մանկավարժական և հոգեբանական տարբեր հնարներ՝ առողջ, ամուր, աշխատունակ և համագործակվող դասարանական կոլեկտիվ ունենալու համար։

5.Դաստիարակության գործում հենվել սովորողի ուժեղ կողմերի վրա

6.Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա ,

համագործակցություն, փոխօգնություն) :

Հայեցի դաստիարակություն

-Հոգևոր դաստիարակություն

Իմանա և հարգի սեփական ժողովրդի հոգևոր և բարոյական մշակույթի հիմքերը: Հավատ ու հարգանք ունենա դարերով փորձարկված մարդկային արժեքների նկատմամբ: Պատրաստակամություն ցուցաբերի իր և այլոց վարքը, արարքները և դրանց հետևանքները ըստ ազգային արժեքային համակարգի գնահատելու: Որպես իր ազգի մի մասնիկ, որպես հայրենասեր՝ հետաքրքրություն ցուցաբերի մայր լեզվի, պատմության, մշակույթի նկատմամբ:

-Գեղագիտական դաստիարակություն

Ունենա ընկալունակություն մշակույթի տարբեր տեսակների նկատմամբ՝ երաժշտություն,պար,նկարչություն ,աստունք: Հասկանա նրա կարևոր ազդեցությունը մարդկանց հոգեկան վիճակի և վարքի վրա, հասկանա և հարգի իր և այլ ժողովուրդների արվեստի ստեղծագործությունները, մասնակցի մշակույթի գործիչներին նվիրված միջոցառումներին, դիտումներին: Սեր ունենա գեղեցիկի նկատմամբ:

-Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Զինվորական կիրառական գիտելիքներ և ունակություններ ունենա, որոնք անհրաժեշտ են հայրենիքի պաշտպանության ժամանակ: Գիտակցի իր ազգային ինքնությունը, իմանա և հարգի անցյալի և ներկայի հերոսներին, նրանց կյանքին և գործունեությանը ծանոթանա: Լինի հայրենասեր և ազգային արժեքներ կրող:

-Ֆիզիկական դաստիարակություն

Հասկանա առողջության նշանակությունն ու արժեքը մարդու կյանքում: Ակտիվորեն մասնակցի ֆիզկուլտուրայի դասերին, ծանոթ լինի

մարզաշխարհի նվաճումներին: Կարողանա պաշտպանել անվտանգության կանոնները: Հաղթահարի ստրեսային իրավիճակները: Գնահատի իր և այլոց հուզական վիճակը, կարող լինի կառավարել իր զգացմունքները:

-Աշխատանքային դաստիարակություն

Հարգի աշխատանքը, գնահատի իր և ուրիշների աշխատանքի արդյունքները: Պլանավորի և իրականացնի աշխատանքային գործունեություն ընտանիքում, դպրոցում: Գիտակցի աշխատել սովորելու կարևորությունը, դրա համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերի: Հասկանա մասնագիտական հմտության կարևորությունը այսօրվա տեխնիկական զարգացման պայմաններում:

-Բնապահպանական դաստիարակություն

Ունենա գիտելիքներ շրջակա միջավայրի պահպանության մասին: Հասկանա էկոլոգիական խնդիրների գլոբալությունը, ուղիներ փնտրի դրանց լուծման համար: Արգելի այն գործողությունները, որոնք կվնասեն բնությանը, շրջապատին: Հասկանա իր դերը և պատասխանատվությունը ինչպես քաղաքացի, այնպես էլ մարդ տեսանկյունից:

-Դպրոց-ընտանիք կապը

Կազմակերպել ծնողական ժողովներ, մշտապես կապ պահել ծնողների հետ, լուծել դասարանի առջև ծառացած խնդիրները: Ծնողներին մշտապես տեղյակ պահել երեխաների ուսումնական և կարգապահական խնդիրներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական և դպրոցական խորհուրդներին	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Ուշադրության կենտրոնում պահել հետ մնացող աշակերտներին	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնելերեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Դասղեկի պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները՝ ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն,դաստիարակության հիմքում դնել հիմնական դպրոցի շրջավարտի նկարագրի պահանջները	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ- դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական զեկուցումներ, անցկացնել սեմինարներ, քննարկումներ	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Պետական և ազգային տոների, միջոցառումների, հանդիպումների, այցերի կազմակերպում	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Նշանավոր մարդկանց նվիրված հոբելյանական միջոցառումների կազմակերպում	Ուստարվա ընթացքում	դասղեկ
Ակտիվ մասնակցել «Մաքուր Հայաստան» ծրագրին՝ մասնակցել և դպրոցական և	Ուստարվա ընթացքում	դասղեկ

քաղաքային շաբաթօրյակներին			
Անցկացնել ցերեկույթներ նվիրված նշանավոր օրերին		Ուստարվա ընթացքում	դասղեկ
Ուս/շ	ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ		
I	Կազմել դաստիարակչական աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: Նոր ուստարվա անելիքների ծրագրում: Դասագրքերի հաշվառում: Զրույց « Իմ իրավունքները և պարտականությունները»	4-8 սեպտեմբեր	Դասղեկ, գրադարանավար:
II	Դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 3-5 հոգուց/ ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը, միջոցառումներին: Դասարանական հերթապահության կազմակերպում:Դասարանական և աշակերտական խորհոիրդների կազմակերպում: Զրույց « Իմ իրավունքները և պարտականությունները»	11-15 սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտներ
III	Հայաստանի անկախությանը նվիրված զրույց «Հայաստանի 3-րդ հանրապետությունը» թեմայով:	18-22 սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտներ
IV	Դասասենյակի պաստառների թարմացում:Լրացուցիչ կանոնների մշակում:Զրույց « Ոչ ոք չի մոռացվել » թեմայով	25-29 սեպտեմբեր	Դասղեկ, աշակերտներ
V	Ուսուցչի օրվան նվիրված զրույց .« Քո հպարտության անունը- Ուսուցիչ»	2-6 հոկտեմբեր	Դասղեկ
VI	Զրույցներ պարապող ուսուցիչների հետ: Պարզել աշակերտների վարքի կուլտուրան դասի ժամանակ:Զրույց «Իմ կատարած լավ գործերը»	2-6 հոկտեմբեր	Դասղեկ, պարապող ուսուցիչներ
VII	Զրույց անձնական հիգիենայի պահպանման մասին:Զրույց. «Առողջ ապրելակերպ»	16-20 հոկտեմբեր	Դասղեկ, բուժքույր
VIII	Զրույց «Աշուն է, ուշ է» թեմայով:Միջոցառում նվիրված աշնանը:	30 հոկտեմբեր-նոյեմբերի 3	Դասղեկ
IX	Կիսամյակի առաջին քառորդի արդյունքների ամփոփում:	6-10 նոյեմբեր	Դասղեկ
X	Բանավեճ « Ո՞վ է իսկական ընկերը»թեմայով:Զրույց « Ի՞նչպես ապացուցել քո ճշմարտացիությունը»	13-17 նոյեմբեր	Դասղեկ
XI	Զրույց հետ մնացող աշակերտների հետ «Ի՞նչն է խանգարում լավ սովորել» թեմայով:	20-24 նոյեմբեր	Դասղեկ

XII	Դասագրքերի խնամքի ստուգում: Զրույց « Ո՞վ է իմ իդեալը»:	27-1 դեկտեմբեր	Դասղեկ
XIII	Երկրաշարժի զոհերի ոգեկոչման օրը: Զրույց « Բնական աղետներ» թեմայով:	4-8 դեկտեմբեր	Դասղեկ, աշակերտներ
XIV	Կազմակերպել « Հմուտ ձեռքեր» ցուցահանդես:Դաստիարակել սեր ուսման նկատմամբ:	11-15 դեկտեմբեր	Դասղեկ
XV	Նախապատրաստվել ծննդյան տոներին: Առաջին կիսամյակի ամփոփում: Զրույց «Ուրախ, լուսավոր տոն՝Ս. Ծնունդ»:	18-22 դեկտեմբեր	Դասղեկ
	ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ		
I	Զրույց և դասախոսություն «Իմ արձակուրդը» թեմայով: Դաստիարակել սեր գեղեցիկի ,բարու նկատմամբ:	8-12 հունվար	Դասղեկ
II	Կարգապահական հարցերի քննարկում,երկրորդ կիսամյակի խնդիրները:	15-19 հունվար	Դասղեկ,աշակերտներ
III	Հրավիրել ծնողական ժողով: Անրադառնալ երկրորդ կիսամյակի խնդիրներին:	22-26 հունվար	Դասղեկ
IV	Անցկացնել զրույց «Մեր սիրելի մեծերը» թեմայով:	29 հունվար-2 փետրվար	Դասղեկ
V	Այցելություն գեղարվեստի դպրոցի ցուցասրահ: Զրույց «Գիրքը,որ փոխեց իմ կյանքը» թեմայով:	5-9 փետրվար	Դասղեկ
VI	Զրույցներ հոգևոր թեմաներով: Տյառնընդառաջի խորհուրդը:	12-16 փետրվար	Դասղեկ
VII	Այցելություն Սիսիանի պատմության թահգարան: Կարգապահական հարցերի քննարկում:	19-23 փետրվար	Դասղեկ
VIII	Դասարանի գարնանային ձևավորում: Զրույց « Գարնան և աշխատանքի տոն»:	26-1 մարտ	Դասղեկ
IX	Մարտի 8-ին նվիրված միջոցառում: Զրույց «Գիտեմ,որ կանայք գեղեցիկ են»:	4-8 մարտ	Դասղեկ,աշակերտներ
X	Ասմունքի մրցույթ « Ի՞նչպես կուզեիր ապրել»թեմայով:	11-15 մարտ	Դասղեկ,աշակերտներ
XI	Զրույցներ բնության պահպանության մասին: Բացօթյա զբոսանքներ:	18-22 ապրիլ	Դասղեկ,աշակերտներ
XII	Ծաղկեփնջեր աղջիկներին՝ նվիրված Գեղեցկության տոնին: Զրույց « Ընտանիք	1-5 ապրիլ	Դասղեկ

	և բարեկամություն» թեմայով:		
XIII	Կարգապահական հարցերի քննարկում: Դասագրքերի ստուգում:	8-123 ապրիլ	Դասղեկ
XIV	Զրույց ցեղասպանություն թեմայով: Այցելություն հուշարձան:	15-19 ապրիլ	Դասղեկ
XV	Զրույց « Գարնան և աշխատանքի տոն» թեմայով:	22-26 ապրիլ	Դասղեկ
XVI	Առաջադիմության հարցերի քննարկում:	29-03 ապրիլ	Դասղեկ
XVII	Վերանորոգել և նախապատրաստել դասագրքերը գրադարանին հանձնելու համար	6-10 մայիս	Դասղեկ
XVIII	Ծնողական ժողով, ուստարվա անելիքների նախապատրաստում:	13-17 մայիս	Դասղեկ
XIX	Կազմակերպել էքսկուրսիա	20-24 մայիս	Դասղեկ, ծնողներ